

Ը. ԱՐՇԱԽԱՆԻՔ ՍՈՒԼՏԱՆ ՄՈՒՐԱՏԻ Ի ՎԵՐԱՅ
ՊԱՐՍԻՑ 1635

Յայսմ ամի խրոխտ եւ գոռոզ հպարտ
զազանն եւ ամբարտաւան վիշապն սաստիկ
հրաման եհանն եւ ետ կանչել եօթն տարի սէ-
25 Ֆէր ի վերայ Խզըլպաշին. եւ ինքն աճապա-
րեալ զնայ Իզմուտ. եւ անտի Ղօնիայ. եւ
ասին թէ ժեճՈՒ հողի էր ընդ նմա, զատ վէզ-
րէն, որ այսչափ հեճելօք խշլախ էր: Եւ կան-
չեցուց թէ Վա՛յ այն մարդուն, որ կէս դրամ
30 օլաֆայ ուտէ եւ չի վայ սէֆէր: Եւ այսպէս
բուլք ի բուլաց եւ հազար հազարաց երթային
գինի թաղաւորին, զատ ի Թաթարաց: Միայն
Աստուած ազատէ զազգս Հայոց այտ անթիւ եւ
անհամար զօրաց, որ ելին իբրեւ զմարախ
35 ծածկելով զզաշտս եւ զերեսս երկրի, զնալով
Հայոց քաղաքաւ եւ զեղօրէօք եւ ամենայն դա-
ւառօք. յորոց փրկէ Քրիստոս Աստուած:

Ի. ՍՈՒՐԿՈՒՆ 1635

Դարձեալ կրկին չար հրաման եհանն վի-
շապն ահազին, որ սուրկան լինի քառսուն
40 տարեն ի վեր եկողաց: Եւ էմիրնի զրկեց ամէն
քաղաք եւ նախ Ստամպօլ, թէ Վա՛յ ան մար-
դուն, որ մինչեւ քսան օր չերթայ ի սիլան:
Վա՛յ մեծի աղէտիս եւ աւաղ տարակուսանաց
եւ տառապանացս, թէ ո՞ւստ եկին այս վիշտք
45 եւ նեղութիւնք Հայոցն: Անդ էր տեսանել զլաց
եւ զազազակ եւ զտարտարոսն. ոմանք աստի
զնալն եւ կէսք ի բերան սրոյ մտանէն. վա՛յ

23 յամբարտաւան: — 42 չերթա: — 43 մէծի: —
47 բերանոյ: